8073

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 11/11

Ք. Երևան 25.04.2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության ղեկավար Սամվել Գևորգյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշումներ),՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 14-ի N 649-Ա/2 «ԵՔ-ԴՄ-ՍՁ 04/22 ծածկագրով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի որոշումները հաստատելու մասին» հրամանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 25-ի N 738-Ա հրամանը՝ «ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» դասընթացների և խորհրդատվության անցկացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն պայմանագրի Հավելված N 2-ում ներկայացված ֆինանսական նախահաշվի, կազմակերպությանը հատկացնել 1,999.8 հազ. (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառում) ներկայացված են սույն Պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը՝ Հավելված N 5-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշումներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. ավարտված Միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել Պետական մարմին 7.3. կետով սահմանված ժամկետում, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը Հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է Պպայմանագրի պայմաններին, Պետական մարմինը պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարը Կազմակերպությանն է հատկացվում համաձայն վճարման ժամանակացույցի: (Հավելված N 3)

5.2. Սահմանված գումարի 80%-ը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4) ստորագրելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի Հավելված N 1-ում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1. կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման և հաշվետվությունների ներկայացման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության, հաշվետվությունների ներկայացման ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2022 թ. հոկտեմբերի 25-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թ. նոյեմբերի 10-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածներով հաստատվում են, համապատասխանաբար, ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, վճարման ժամանակացույցը, հանձնման-ընդունման ակտը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինը այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	«Բի էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
և սպորտի նախարարություն	ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,
Երևան, Վ. Սարգսյան 3	«Բիզնես Պալե» կենտրոն
Կառավարական տուն N 2	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570005343780100 ՀՎՀՀ 00930412
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	bsc@bsc.am
Գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության ղեկավար՝
Գագիկ Սաֆարյան	**Մամվել Գևորգյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2022թ. մայիսի 25-ին
կնքված N 27/11 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	անվանումը	Նկարագիրը	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (<< դրամ) (չի ներառում ԱԱՀ)
1	Սոցիալական ձեռներեցության դասընթացների կազմակերպում և անցկացում	Մարքեթինգային գործողությունների արդյունքում դասընթացների 50 մանսակիցների հավաքագրում	- Մարքեթինգային նյութերի մշակում - Մարքեթինգային արշավի իրականացում - Դասընթացների մասնակիցների հավաքագրում - Հարցազրույցների անցկացում - Դասընթացների խմբերի կազմում - Դասընթացների մոդուլների վերջնական մշակում - Դասընթացների կազմակերպում և անցկացում	- Մշակված մարքեթինգային նյութեր - Դասընթացների վերջնական մոդուլներ - Նվազագույնը 100 դիմորդներ - 50 դասընթացների մասնակիցներ - 2 խմբերի համար 10-օրյա դասընթացների անցկացում	Հուլիսի 30, 2022թ.	Իրականացված գործողությունների, մասնակիցների, միջոցառումների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն Օգոստոսի 10, 2022թ.	1,140,500
2	Սերտիֆիկատների հանձնում	Ավարտական միջոցառման կազմակերպում և սերտիֆիկատների հանձնում	- Սերտիֆիկատների պատրաստում - Սերտիֆիկատների տպագրություն - Ավարտական միջոցառման կազմակերպում - Սերտիֆիկատների հանձնում	- 50 տպագրված սերտիֆիկատներ - Ավարտական միջոցառում	Օգոստոսի 15, 2022թ.	Հաշվետվություն միջոցառման վերաբերյալ՝ ներառյալ նկարներ Օգոստոսի 20, 2022թ.	30,000
3	Աջակցություն,	Աջակցություն,	- Մասնակիցների համար	- Յուրաքանչյուր	Սեպտեմբերի 30,	Հաշվետվություն	446,000

	խորհրդատվություն ծրագրի մասնակիցներին	խորհրդատվություն կտրամադրվի դասընթացների մասնակիցներին՝ սոցիալական ձեռներեցության կոնցեպտներ, գործողությունների պլաններ, գործարար ծրագրեր մշակելու հարցում՝ ըստ անհրաժեշտության	խորհրդատվական հանդիպումների անցկացում, 3 հանդիպում յուրաքանչյուր խմբի համար - Աջակցություն մասնակիցներին՝ գործարար ծրագրերի, գործողությունների պլանների, կոնցեպտների մշակման մեջ - Մշակված նյութերի անհատական վերանայում, հետադարձ կապի ապահովում, վերջնական տեսքի ստացում:	խմբի համար խորհրդատվական 3 հանդիպումներ - Նվազագույնը 35 մշակված գործարար ծրագրեր, կոնցեպտներ, գործողությունների պլաններ	2022թ.	խորհրդատվական հանդիպումների վերաբերյալ Մշակված գործարար ծրագրերի կամ գործողությունների ծրագրերի կամ կոնցեպտների տրամադրում Հոկտեմբերի 15, 2022թ.	
4	Վերջնական հավետվություն	Պայմանագրի շրջանակներում իրականացված բոլոր միջոցառումների, գործողությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում	- Պայմանագրի գործողության ողջ ընթացքում կատարված Աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, ամբողջականացում Վերջնական հաշվետվության կազմում	Վերջնական հաշվետվություն	Հոկտեմբերի 25, 2022թ.	Վերջնական հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ուղարկում ՀՀ ԿԳՄՄՆ Հոկտեմբեր 25, 2022թ.	50,000
	Ընդամենը						**1,666,500**
	ԱԱՀ						**333.300**
	ԸՆԴԱՄԵՆԸ						**1,999.800**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան

Կ. Տ.

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100
ՀՎՀՀ 00930412
Հեռ.՝ 010 57 47 78
Կազմակերպության ղեկավար՝
bsc@bsc.am

Ս. Գևորգյան

Կ. Տ.

ԿԱՀՄԵՑ՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ

Լ. Մուրադյան

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ ..... Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ ..... Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ..... Վ. Գասպարյան

Հավելված 2
2022թ. մայիսի 23-ին
կնքված N 8/11 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
Ծրագրի անուն «ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» դասընթացների և խորհրդատվության անցկացման ծրագիր
Ծրագրի տևողություն 25.04.2022-25.10.2022

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)
Աշխատավարձ					
Ա					
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	6	50000	300000
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	6	40000	240000
1.3	Դասընթացավար 1	ժամ	52	3500	182000
1.4	Դասընթացավար 2	ժամ	50	3500	175000
1.5	Խորհրդատու	ամիս	2	90000	180000
1.5	Հաշվապահ	ամիս	6	5000	30000
Ընդամենը				1,107.000	
Բ	Ծրագրային ծախսեր				
2.1	Գրենական պիտույքներ	փաթեթ	50	450	22500
2.2	Տպագիր նյութեր	փաթեթ	50	300	15000
2.3	Սերտիֆիկատներ	հատ	50	300	15000
2.4	Սուրճի ընդմիջում՝ (50 մասնակից*10օր*300դրամ=150000դրամ)	մասնակից/օր	500	300	150000
Ընդամենը Բ				202.500	
Գ	Գործուղում				
3.1	Կեցություն, դասընթացավարներ	օր	10	15000	150000
3.2	Կեցություն, խորհրդատուներ	օր	5	15000	75000
3.3	Ճանապարհածախս	կմ	1200	100	120000
Ընդամենը Գ				345.000	
Դ	Վարչական ծախսեր				
4.1	Մարքեթինգային ծախսեր՝ (առաջխաղացում, դիզայն, գովազդ)	ամիս	4	3000	12000
Ընդամենը Դ				12.000	
Ընդամենը					1,666.500
ԱԱՀ					333.300
ԸՆԴԱՄԵՆԸ					1,999,800

*ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Գ. Սաֆարյան
Կ. Տ.

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100
ՀՎՀՀ 00930412
Հեռ.՝ 010 57 47 78
Կազմակերպության ղեկավար՝
bsc@bsc.am
_____ Ս. Գևորգյան
Կ. Տ.

ԿԱՌՄԵՑ՝
Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ
_____ Լ. Մուրադյան
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝
Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ _____ Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ _____ Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ_____ Վ. Գասպարյան

Հավելված N 3
2022թ. մայիսի 25-ին
կնքված N 27/11 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ-ն

Հազ. դրամ

«1115. Երիտասարդության ծրագիր» «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» «Սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես երիտասարդության առաջընթացի, երիտասարդների շրջանում գործարարության, սոցիալիզացիայի, առաջնորդության (այդ թվում՝ երիտասարդ կանանց) խթանման մեխանիզմ» ծրագրի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
«ԵՔ ԴՄ ՍՁ 04/22»	99999999/	-	-	-	1,599.8	1,599.8	1,599.8	1,599.8	1,599.8	1,599.8	1,999.8	1,999.8	1,999.8	**1,999.8**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Կ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
Կ. Տ.

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100
ՀՎՀՀ 00930412
Հեռ.՝ 010 57 47 78
Կազմակերպության ղեկավար՝
bsc@bsc.am
Ս. Գևորգյան
Կ. Տ.

Հավելված N 4
2022 թ. մայիսի 25 -ին
կնքված N 2-29/11 պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պետական մարմին
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---
-- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Գ. Սաֆարյան
Կ. Տ.

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100
ՀՎՀՀ 00930412
Հեռ.՝ 010 57 47 78
Կազմակերպության ղեկավար՝
bsc@bsc.am
_____ Ս. Գևորգյան
Կ. Տ.

ԿԱՌՄԵՑ՝
Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ
_____ Լ. Մուրադյան
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝
Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ _____ Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ _____ Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ_____ Վ. Գասպարյան

Հավելված N 5
2022 թ. մարտի 25-ին
կնքված N 2511 պայմանագրի

Համառոտագիր

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը ներկայացնում է «ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» դասընթացների և խորհրդատվության անցկացման ծրագիրը, որը նախատեսված է Երևանի, Տավուշի մարզի և հարակից տարածքների երիտասարդների, երիտասարդ կանանց համար, որոնք ցանկանում են հիմնել սոցիալական ձեռնարկատիրություն, շահագրգռված են զարգացնել իրենց բիզնես գաղափարները, սովորել սոցիալական ձեռնարկատիրության հիմունքները, զուգահեռ տիրապետելով առաջնորդման և կառավարման կիրառելի գործիքներին: Շահառու կարող են հանդիսանալ մինչև 35 տարեկան առավելագույնը 50 երիտասարդներ Երևանից, Տավուշի մարզից և հարակից տարածքներից: Ծրագրի շահառուների նվազագույնը 60 տոկոսը կլինեն կանայք:

Ծրագրի մասնակիցները կսովորեն, թե ինչպես հիմնել, ղեկավարել և զարգացնել սեփական բիզնեսը, Սոցիալական ձեռներեցությունը: Բացի այդ, բիզնես գաղափարներ ունեցող երիտասարդները կկարողանան մշակել իրենց գաղափարների գործողությունների պլանը, բիզնես ծրագրերը և հետագայում հնարավորություն կունենան հիմնել սեփական սոցիալական ձեռնարկատիրությունը: Ծրագիրը ակտիվորեն կաջակցի երիտասարդ ձեռներեցներին՝ ուսուցման, մենթորության և խորհրդատվության հարցերում իրենց բիզնեսի նախնական զարգացման և ինկուբացիոն փուլում:

Ծրագրի նկարագրություն

«ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» դասընթացների և խորհրդատվության անցկացման ծագրի հիմնական շարժառիթն այն է, որ երիտասարդներն այսօր մեծ մոտիվացիա ունեն սոցիալական փոփոխությունների մեջ ունենալ իրենց սեփական ներդրումը և ապահովել տնտեսական կայուն զարգացում:

«ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» ծրագրի շահառուները հանդիսանում են երիտասարդները, որոնք տեղեկացված և շահագրգռված են սոցիալ-տնտեսական խնդիրներով: Կայուն զարգացող միջավայրում ապրելը առաջնահերթություն է, ինչն էլ հանդիսանում է երիտասարդների համար դրդապատճառ, որպեսզի զարգացնեն նոր գաղափարներ՝ առաջիկա տարիներին գլոբալ մարտահրավերները լուծելու համար:

Այս ծրագրի իրականացումը դրական անդրադարձ կունենա ոչ միայն երիտասարդների, այլև իրանց համայնքների զարգացման համար: Երիտասարդները կարող են բարելավել աշխատավայրերի խնդիրը համայնքներում հիմնելով իրենց սեփական սոցիալական ձեռնարկատիրությունը կամ աշխատելով գործող բիզնեսի համար նոր ձեռք բերած գիտելիքներով:

Առաջարկվող ծրագիրը հնարավորություն կտա ձեռք բերել սոցիալական ձեռներեցությունում 21-րդ դարի համար անհրաժեշտ հմտությունները, որոնք են՝ քննադատական

մտածողությունը և խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումը, հաղորդակցության, արդյունավետ շփման և համագործակցության կարողությունները:

Սույն ծրագրի շրջանակներում BSC ընկերությունն առաջարկում է իրականացնել մինչև 50 երիտասարդների, այդ թվում երիտասարդ կանանց վերազինում սոցիալական ձեռներեցության վերաբերյալ գիտելիքներով և հմտություններով: Ծրագիրը կխթանի երիտասարդության շրջանում գործարարությունը, առաջնորդության հմտությունները:

Կկազմակերպվեն սոցիալական ձեռներեցության և փափուկ հմտությունների զարգացման դասընթացներ 2 խմբի երիտասարդների համար (առավելագույնը 50 հոգի): Դասընթացների ընթացքում և դրանից հետո մասնակիցներին կտրամադրվի անհատական խորհրդատվություն սոցիալական ձեռնարկատիրության գործարար ծրագրերի մշակման համար: Մասնակիցներին կտրամադրվի շարունակական 12 ամսյա խորհրդատվություն ՍՁ հիմնման և զարգացման համար BSC խորհրդատվական թիմի կողմից:

Դասընթացների և խորհդրատվությունների ընթացքում մասնակիցները ձեռք կբերեն պրակտիկ գիտելիքներ և հմտություններ: Դասընթացների ժամանակ BSC-ն կհրավիրի ոլորտի տարբեր մասնագետների, հաջողակ գործարարների, որոնք կկիսվեն իրենց փորձով և կմոտիվացնեն մասնակիցներին:

<u>Կազմակերպության փորձառությունը</u>

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնն իր գործունեության 28 տարիների ընթացքում հասել է մեծ նվաճումների: Մասնավորապես, հատկանշական է ընկերության հարուստ փորձը ձեռնարկատիրության, փոքր և միջին բիզնեսի զարգացման բնագավառում, զարգացման ծրագրերի, դասընթացների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև շուկայի ուսումնասիրության, , ռազմավարության, գործարար ծրագրերի, շուկայավարման, ներդրումային ծրագրերի, արտադրական պլանների մշակման, ծրագրային առաջարկների մշակման գործում: Ընկերության փորձառությունը հաջողությամբ կներդրվի և կօգտագործվի այս ծրագիրը բարձր մակարդակով իրականացնելու համար: «Բի Էս Սի»-ն, 1994թ-ից առ այսօր, ակտիվ համագործակցում է պետական կառույցների, տեղական և միջազգային հաստատությունների հետ (USAID, UN, EU, OXFAM, ADA, the World Bank, IDeA Foundation, JMF, և այլն)՝ անմիջական աջակցություն ցուցաբերելով ձեռնարկատերերին և բիզնեսի ներկայացուցիչներին ՀՀ բոլոր մարզերում և Երևանում՝ մատուցելով խորհրդատվական, հետազոտական և թրեյնինգների անցկացման ծառայություններ:

Ստորև բերված են «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից իրականացված որոշ ծրագրերի հակիրճ նկարագրերը.

- 2019 թ.-ից մինչ այժմ «Բի Էս Սի» - ն իրականացնում է դասընթացներ սոցիալական ձեռներեցության և բիզնես պլանի մշակման դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ՝ «Սիրիահայ ընտանիքների սոցիալ-տնտեսական ինտեգրումը Երևանում» ծրագրի շրջանակներում: Դասընթացները և խորհրդատվությունը իրականացվելու է ընդհանուր 195 շահառուի հետ: Ծրագրի արդյունքում մասնակիցները մշակում են իրենց բիզնես պլանները, դրանց հիման վրա դրամաշնորհներ ստանում, հիմնում իրենց բիզնեսները, որի ընթացքում ստանում են շարունակական խորհրդատվություն և աջակցություն:
- 2019 թ.-ից մինչ այժմ «Բի Էս Սի»-ն UOU մանկական գյուղերի հետ համատեղ իրականացնում է Սոցիալական ձեռներեցության ստեղծում Հայաստանի սահմանամերձ

գյուղերում ծրագիրը: 42 շահառուների համար անցկացվել են սոցիալական ձեռնարկատիրության և սոցիալական բիզնեսի կայացման, բիզնես պլանի և բիզնես մոդելի մշակման դասընթացներ: Մրցույթի արդյունքում նրանցից 8-ը ստացել են դրամաշնորհներ: BSC- ն նրանց համար շարունակական մոնիտորինգ և խորհրդատվական ծառայություններ է իրականացնում:

- 2020թ. «Բի Էս Սի» - ն իրականացրել է GREENcubator աքսելերացիոն ծրագիրը՝ «EU4Youth - Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում սահմանամերձ գյուղերում՝ կանաչ առաջընթացի համար» ծրագրի շրջանակներում՝ Կանաչ արահետ ՀԿ-ի հետ համատեղ: Ծրագրի նպատակն էր ստեղծել բարենպաստ պայմաններ սոցիալական ձեռներեցության և կանաչ նորարարությունների զարգացման համար Հայաստանի սահմանամերձ մարզերում
- 2018 թ.-ից մինչ 2021թ. «Բի Էս Սի»-ն իրականացրել է ԵՄ-ի և ԱԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ աշխատունակություն և կայունություն Հայաստանում, Բելառուսում և Ուկրաինայում» ծրագրի Ձեռնարկատիրական բաղադրիչը, որի շրջանակներում մատուցում է ձեռնարկատիրական դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ ծրագրի շահառուներին: Ծրագրի շրջանակներում 50 երիտասարդներ վերապատրաստվել են Երևանում և Իջևանում: Դասընթացների հիմնական թեմաներն են բիզնես գաղափարի ստեղծում, բիզնես պլանի և բիզնես մոդելի մշակում, կառավարում, շուկայի ուսումնասիրություն, շուկայավարում, վաճառք, ֆինանսների կառավարում, փիչինգ և այլն: Ընտրվել են 16 դրամաշնորհառու, ովքեր հիմնել են իրենց բիզնեսները:
- 2020թ. «Բի Էս Սի»-ն Ջինիշյան հիշատակի հիմնադրամի հետ՝ Youth Business Armenia նախագծի շրջանակներում՝ տարբեր մարզերից երիտասարդների հետ իրականացրել է դասընթացներ: Դասընթացների ընթացքում մասնակիցներին դասավանդվել է սոցիալական ձեռնարկատիրություն, բիզնես մոդելի մշակում և ֆինանսական կանխատեսումներ: Դասընթացների ավարտից հետո «Բի Էս Սի»-ն իրականացրել է բիզնեսների աքսելերացիա, տրամադրել խորհրդատվություն բիզնես մոդելի մշակման հարցում:
- 2016 - 2017 թթ. «Բի Էս Սի»-ն Երևանում բրիտանական դեսպանատան հետ իրականացրել է Armenian-British IT Initiatives ծրագիրը: Ծրագրի նպատակն էր բրիտանական շուկայում հայկական SS ընկերությունների ներկայության ապահովումը: Արդյունքում՝ 16 հայկական SS ընկերություններ սկսել են համագործակցությունը բրիտանական ընկերությունների հետ: «Բի Էս Սի»-ն աշխատել է բոլոր ընկերությունների հետ՝ ապահովելով ընկերությունների առաջխաղացումը:

Մի շարք այլ ծրագրերի մասին տեղեկատվություն կարող է տրամադրվել ըստ հարցման:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

«ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» դասընթացների և խորհրդատվության անցկացման ծրագրի *նպատակն է* խթանել Երևան, Տավուշի մարզ և հարակից տարածքներ գործունեություն ծավալող երիտասարդների (16-35 տարեկան) համար սոցիալական ձեռնարկատիրության հմտությունները՝ ստեղծելով զբաղվածության և ձեռներեցության ավելի լայն հնարավորություններ և հեռանկարներ, նպաստելով երիտասարդների (այդ թվում՝ երիտասարդ կանանց) շրջանում գործարարության, սոցիալիզացիայի, առաջնորդության խթանմանը, ապահովելով նախնական աշխատանքային փորձը, միաժամանակ զարգացնելով առաջնորդության հմտություններ և սոցիալական գործակալության զգացում, բարձրացնելով նրանց մասնակցությունը Հայաստանյան աշխատաշուկայում և գործարար միջավայրում:

«ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» ծրագրի շրջանակներում հիմնական *խնդիրներն են՝* հավասար զբաղվածության եւ աշխատատեղերի ստեղծումը, որակյալ իրավական համակարգը ֆինանսների և այլ աջակցության ձևերի բարենպաստ պայմանների հասանելիությունը աշխատաշուկայում, բյուրոկրատական խոչընդոտները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կայունությունը երկրում:

Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքներն են՝ երիտասարդների միջև սոցիալական ձեռներեցության և կառավարման հմտությունների բարելավումը, ինչպես նաև բիզնես մեխանիզմների, գործելակերպի, օրենքների ու կանոնակարգերի, ֆինանսական գրագիտության ամրապնդումը, ընդլայնելով իրենց գիտելիքները, ձեռնարկատիրական մտածելակերպի և մշակույթի վերաբերյալ:

Գործողություններ

Ծրագրի շրջանակներում առաջարկվում է իրականացնել հետևյալ հիմնական գործողությունները՝

1. Մարքեթինգային արշավի իրականացում, թիրախային խմբից մասնակիցների հավաքագրում
2. Դասընթացների կազմակերպում և իրականացում
3. Խորհրդատվություն գործարար ծրագրերի մշակման համար
4. Մինչև 2 ամիս տևողությամբ խորհրդատվություն դասընթացի մասնակիցներին՝ ձեռնարկատիրական գաղափարների իրականացման գործում
5. Վերջնական հաշվետվության տրամադրում
   1. *Մարքեթինգային արշավի իրականացում, թիրախային խմբում գտնվող անհատների հավաքագրում.*

Ծրագրի մասին տեղեկատվության տարածման և մասնակցիների հավաքագրման նպատակով կմշակվեն մարքեթինգային նյութեր ինչպես օնլայն, այնպես էլ օֆլայն հարթակների համար: Ակտիվ մարքեթինգային գործողությունների կիրականացվեն համապատասխան պոտենցիալ շահառուների հավաքագրման համար:

Տեղեկատվության տարածման համար կօգտագործվեն նաև հետևյալ միջոցները՝

- «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կայքը՝ www.bsc.am
- «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի Facebook-յան էջը՝ www.facebook.com/BSCBusinessSupportCenter

- «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի LinkedIn-յան էջը՝www.linkedin.com/company/bsc-business-support-center

- «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի պոտենցիալ շահառուների էլ. հասցների բազան

- Գործընկեր կազմակերպությունների օնլայն հասանելի հարթակները

- «Բի Էս Սի»-ն անդամակցում է 9 միությունների, տեղեկատվությունը կտարածվի նաև միությունների առցանց հարթակների միջոցով:

- Տեղեկատվության տարածման համար կներգրավվեն մարզային տեխնոլոգիական համայնքները, կենտրոնները, մարզային հեռուստաընկերությունները, լրատվական միջոցներ:

Հետաքրքրված դիմորդների գրանցումը նախատեսվում է կազմակերպել Google Forms-ի միջոցով:

Ծրագրի շրջանակներում կսահմանվեն մասնակիցների ընտրության որոշակի չափանիշներ: Կկազմակերպվի հավաքագրման երկփուլ գործընթաց.

- Դիմումի հայտեր
- Հեռախոսային հարցազրույցներ

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի փորձագետները շահագրգիռ դիմորդների համար կմշակեն հայտի ձև՝ նրանց վերաբերյալ հիմնական տեղեկությունները ստանալու համար՝ ներառյալ անձնական, կրթական և մասնագիտական հմտությունների, մոտիվացիայի մակարդակի և ձեռնարկատիրական գաղափարի մասին:

Ստացված դիմում-հայտերի հիման վրա՝ հաջորդ փուլ անցած դիմորդները կհրավիրվեն դեմ առ դեմ անհատական հարցազրույցների՝ վերջնական ընտրության համար: Շահառուների գնահատման համար կմշակվի ուղեցույց, որտեղ համապատասխան չափանիշներին կտրվի կշիռներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են նախնական գնահատման ցուցանիշները, յուրաքանչյուրի նկարագրությունը և կշիռը՝

Չափանիշ	Նկարագրություն	Կշիռ
Մոտիվացիա	Դիմորդը դրսևորում է մոտիվացիայի բարձր մակարդակ, ցանկանում է ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ, հստակ պատկերացում ունի նախագծին մասնակցության, արդյունքների և սահմանված նպատակների մասին:	40%
Անձնական հմտություններ	Բանավոր հաղորդակցման և ներկայացման հմտություններ, ակտիվ լսելու կարողություններ և այլ փափուկ հմտություններ	30%
Գիտելիքների մակարդակ	Դիմորդն ունի տարրական գիտելիքներ ձեռներեցության ոլորտում:	25%

Ձեռնարկատիրական գաղափար	Դիմորդն արդեն ունի գաղափար, կամ ընտրել է գործունեության ոլորտ	5%

Ծրագրի շահառու կհանդիսանան առավելագույնը 50 երիտասարդներ, որոնց որոշակի տոկոսը կլինեն կին երիտասարդներ:

2. *Դասընթացների կազմակերպում և իրականացում*

Պոտենցիալ շահառուներից կընտրվեն ծրագրի շահառուներ, որոնց համար կկազմակերպվեն դասընթացներ: Մասնակիցներից կկազմվի 2 խումբ, որոնց հետ կանցկացվեն դասընթացներ: Խմբերից մեկի դասընթացները կանցկացվեն Երևանում, Տավուշի մարզում և հարակից տարածքներում:

Սոցիալական ձեռներեցության, փափուկ և կոշտ հմտությունների զարգացման դասընթացի մոդուլը յուրաքանչյուր խմբի համար կազմված կլինի ընդհանուր 10 օր տևողությամբ, յուրաքանչյուրը 2-2,5 ժամից բաղկացած դասընթացներից: Դասընթացները նախատեսվում է իրականացնել և՛ դեմ առ դեմ, և՛ առցանց սկզբունքով: Օրակարգը նախապես կքննարկվի և կհաստատվի ՀՀ ԿԳՄՍՆ ծրագրի թիմի կողմից: Դասընթացների 40 տոկոսն ուղղված կլինի փափուկ հմտությունների, իսկ 60 տոկոսը՝ ձեռնարկատիրական գիտելիքների զարգացմանը:

Սոցիալական ձեռներեցության փափուկ հմտությունների զարգացման դասընթացները կանցկացվեն հետևյալ հիմնական թեմաներով՝

Առաջնորդում

- Առաջնորդություն, թե՞ կառավարում
- Ռազմավարություն
- Առաջնորդության տեսակներ
- Էմոցիոնալ կառավարում

Հաղորդակցման և բանակցության հմտություններ

- Հաղորդակցության նշանակությունը
- Հաղորդակցության տեսակներ
- Հաղորդակցության ձախողման պատճառները
- Խոչընդոտների հաղթահարման համար անհրաժեշտ հմտությունների զարգացում
- Ակտիվ լսողություն, հաղորդակցության բարելավում ակտիվ լսողության միջոցով
- Ինչի կարելի է հասնել բանակցությունների միջոցով
- Ինչպես չբանակցել
- Ինչպիսին պետք է լինի պրոֆեսիոնալ բանակցողը
- Բանակցելու ոճերը
- Բանակցային գործընթացի հիմնական փուլերը

Կառավարման հմտությունների զարգացում

- Կառավարման փուլերը՝ Պլանավորում, Կազմակերպում, Կառավարում, Զարգացում

- Կառավարման ռեսուրսներ՝ Նյութական, Մարդկային, Ֆինանսական, Տեղեկատվական
- Կառավարման գործառույթներ՝ Պլանավորում, Կազմակերպում, Առաջնորդում, Վերահսկում, Փակում, Նախագծերի կառավարում, Ձեռներեցի հմտությունների շրջանակ՝ անձնակազմի կառավարում, ժամանակկառավարում, հաղորդակցային և բանակցային գործընթացների կառավարում և այլն
- Ղեկավարի դերը, անձնակազմի կառավարում՝ Ղեկավարի դերը, Ղեկավարին բնորոշ հատկանիշներ, Ինչպե՞ս դառնալ ղեկավար, Մարդկային ռեսուրսների պահանջների սահմանում, Անձնակազմի հավաքագրում
- Աշխատանքի, առաջադրանքների բաժանում՝ Առաջադրանքի ձևակերպում, Ճիշտ առաջադրանք՝ ճիշտ աշխատակցի, Առաջադրանքների բաշխման մատրիցա, Քոուչինգ և հետադարձ կապ
- Ժամանակի արդյունավետ կառավարում՝ Ինչո՞ւ կառավարել ժամանակը, Ժամանակի «գողեր», Արտադրողականության բարձրացում՝ ժամանակի կառավարման միջոցով, Ժամանակի արդյունավետ կառավարման խորհուրդներ, Նպատակների և առաջնայնությունների սահմանում

Ներկայացման հմտություններ

- Արդյունավետ ներկայացման հիմնական կանոններ
- Լսարանի հետ կապի հաստատում
- Աշխատանք բարդ լսարանի հետ
- Կենտրոնացում լսարանի կարիքների վրա
- Ներկայացման հիմնական ուղերձ
- Լսարանի հետ աչքի կոնտակտի հաստատում
- Ներկայացման 10-20-30 կանոնը
- Պատմությունների դերը ներկայացման ժամանակ
- Ձայնի արդյունավետ օգտագործում

Սոցիալական ձեռներեցության հմտությունների զարգացման դասընթացները կանցկացվեն հետևյալ հիմնական թեմաներով՝

Բիզնես պլանի մշակում

1. Բիզնեսի ստեղծման նպատակը, բիզնես գաղափարը, բիզնես ծրագիրը
   - Բիզնեսի նպատակ / ռազմավարություն
   - Առաքելություն / տեսլական
   - Բիզնես գաղափարների գնահատում
   - Ի՞նչ է բիզնես պլանը և որո՞նք են բիզնես պլանի հիմնական նպատակները
   - Ինչպե՞ս մշակել բիզնես պլան
   - Բիզնես պլանի ուղեցույցի ներկայացում
2. Շուկայի հետազոտություն
   - Շուկայի հետազոտության իրականացման նպատակներ
   - Տվյալների վերլուծություն
   - Դուրս բերված արդյունքների ներկայացում
3. Շուկայի սեգմենտավորում և մաքեթինգ
   - Տեղեկատվության հավաքագրման գործիքներ և մեթոդաբանություն

- Սեգմենտավորման չափանիշներ
- Թիրախավորման սկզբունքներ
- Հաճախորդի պրոֆիլ
- Շուկայի վրա ազդող գործոններ, հաճախորդների վարքագծի գնահատում, հաճախորդների ցանկությունների հիմնական միտումներ

4. Մարքեթինգի և վաճառքի մոդել (4P)
   - Ապրանքի/ծառայության նկարագրությունը
   - Ի՞նչ է մարքեթինգը, մարքեթինգի կառավարման գործընթացը
   - 4P վերլուծություն
   - SWOT վերլուծություն
   - Վաճառքի ռազմավարություն, վաճառքի ծավալների կանխատեսում
   - Հաճախորդների հետ հարաբերությունների և սպասարկման կառավարում
5. Մրցակցային հետազոտություն
   - Արտադրանքի/ծառայության մրցունակության հետազոտություն
   - Մրցակիցների վերլուծություն
   - Մրցակցային պրոֆիլի մշակում մեկ օրինակով
6. Մարդկային ռեսուրսների կառավարում
   - Կառավարում 4 փուլերը
   - Կազմակերպչական կառուցվածքը և կառավարումը
7. Արտադրական և աշխատանքային պլան
8. Ֆինանսական պլան
   - Ծախսերի հաշվարկ
   - Ներդրումային պլան
   - Շահույթ-վնասի հաշվետվություն
   - Դրամական հոսքերի հաշվետվություն
   - Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
   - Անվնասաբերության կետ
9. Ռիսկերի կառավարում
   - Հիմնական հնարավոր ռիսկերի բացահայտում
   - Ռիսկերը նվազեցնելու, դիմակայելու քաղաքականության, քայլերի ներկայացում

Դասընթացների ժամանակ իրականացվելու են գործնական աշխատանքներ, դերախաղեր, անհատական մոտեցում է ցուցաբերվելու յուրաքանչյուր մասնակցի:

Դասընթացի մասնակիցներին կտրամադրվեն մասնակցության վկայականներ:

Դասընթացների վերջնական մոդուլները և օրակարգը կքննարկվի և կհամաձայնեցվի «ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» ծրագրի թիմի հետ, որից հետո դասընթացները կմեկնարկվեն: Դասընթացը խրախուսելու է մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը և հնարավորություն է ընձեռելու նրանց արտահայտել իրենց մտքերը, գաղափարները, մոտեցումներն ու առաջարկությունները: Դասընթացն իրականացվելու է մասնակցային եղանակով՝ մասնակիցները չեն լինելու պասիվ լսողի դերում: Դասընթացի այսպիսի մոտեցումը խթան կհանդիսանա ակտիվ քննարկումների իրականացման համար:

Դասընթացի ընթացքում մասնակիցներին կտրամադրվեն համապատասխան նյութեր, գրքերի հղումներ, օգտակար հոդվածներ:

«Բի Էս Սի»- ի մասնագետների կողմից ամսական կտրվածքով կներկայացվի հաշվետվություն, որը կներառի հետևյալ հիմնական կետերը՝

- Իրականացված գործողություններ և ծրագրի առաջընթաց,
- Ծագած խնդիրները և առաջարկություններ միտված խնդիրների լուծելուն,
- Մասնակիցների ցուցակներ և օրակարգ,
- Դասավանդման նյութեր,
- Նկարներ և այլն:

3. *Խորհրդատվություն գործարար ծրագրերի մշակման համար*

«Բի Էս Սի» խորհրդատվական թիմի կողմից կտրամադրվի անհատական և խմբային խորհրդատվոյթուն դասընթացների մասնակիցներին: Խորհրդատվության արդյունքում մասնակիցները կմշակեն սոցիալական ձեռնարկատիրության գործարար ծրագրեր: Մասնակիցներին կտրամադրվի նաև ուղեցույց գործարար ծրագրի մշակման համար: Խորհրդատվությունը կմատուցվի այն մասնակիցներին, որոնք կցանկանան հիմնել իրենց Սոցիալական ձեռներեցությունը և ցանկություն կունենան մշակելու գործարար ծրագիր:

4. *Մինչև 2 ամիս տևողությամբ խորհրդատվություն դասընթացի մասնակիցներին՝ ձեռնարկատիրական գաղափարների իրականացման գործում*

Դասընթացների և խորհրդատվության անցկացումից հետո «Բի Էս Սի»- ի մասնագետները կտրամադրեն շարունակական (մինչև 2 ամիս դասընթացներից) խորհրդատվություն, որպեսզի օգնի մասնակցիներին Սոցիալական ձեռներեցեությունների հիմնման գործում: Այն կօգնի նրանց բարելավել իրենց հմտություններն ու ներուժը՝ հաջողությամբ ստեղծելու և իրականացնելու իրենց ձեռնարկատիրական նախագծերը:

Խորհրդատվոյան այս փուլում մասնագետները կաջակցեն մասնակիցներին ստեղծելու ու զարիգացնելու իրենց սոցիալական ձեռներեցությունները, հաղթահարելու անորոշության վախը և հաստատուն քայլ անելու դեպի գործող ձեռներեցություն:

5. *Վերջնական հաշվետվության ստրամադրում.*

Ծրագրի ավարտին «Բի Էս Սի»-ի կողմից կներկայացվի վերջնական հաշվետվություն, որը կներառի իրականացված աշխատանքների բնութագիր, քաղած դասերը, առաջարկությունները, դասընթացի գնահատման արդյունքները, դասընթացների եւ խորհրդատվական աշխատանքների պլանը և մասնակիցների ցուցակը:

Ծրագրի արդյունքում մասնակիցները կունենան հետևյալ արդյունքները՝

- Գիտելիքներ սոցիալական ձեռներեցության վերաբերյալ,
- Հիմնավոր կարծիք սոցիալական ձեռներեցության ոլորտների և իրականացման վերաբերյալ,
- Ամբողջական բիզնես պլան, գիտելիքներ բիզնես պլանի տարբեր բաժինների մասին և իրականացման մեկնարկ
- Մի շարք փափուկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են հաջողակ ձեբերեցներին:

«Բի Էս Սի» - ն պատրաստ է իր փորձը ներդնել ծրագրում՝ խթանելու սոցիալական ձեռներեցությունը, որտեղ մասնակիցների կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը կհետապնդի սոցիալական նպատակ և միտված կլինի սոցիալական

փոփոխություններ իրականացնելուն՝ մի կողմից՝ հետևելով ավանդական ձեռնարկատիրության սկզբունքներին, և մյուս կողմից՝ իրագործելով թիրախային սոցիալական նպատակներին հասնելու և սոցիալական փոփոխությանը նպաստելու հնարավորությունները:

Դասավանդման Մեթոդաբանություն

Դասընթացը խրախուսելու մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը և հնարավորություն է ընձեռելու նրանց արտահայտել իրենց մտքերը, գաղափարները, մոտեցումներն ու առաջարկությունները: Դասընթացն իրականացվելու է մասնակցային եղանակով՝ մասնակիցները չեն լինելու պասիվ լսողի դերում: Դասընթացի այսպիսի մոտեցումը խթան կհանդիսանա ակտիվ քննարկումների իրականացման համար:

Դասընթացի իրականացման ժամանակ կկիրառվեն դասավանդման հետևյալ մոտեցումները և եղանակները.



Վերը թվարկված եղանակների և մոտեցումների կիրառումը միտում ունի բարձրացնելու դասընթացի արդյունավետությունը՝ օգնելով մասնակիցներին լիարժեք ընկալել նյութը և հետագայում կիրառել:

Դասընթացի ընթացքում մասնակիցներին կտրամադրվեն համապատասխան նյութեր, գրքերի հղումներ, օգտակար հոդվածներ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ

Ծրագիր «ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» դասընթացների և խորհրդատվության անցկացման ծրագիր

Ժամանակահատված 25.04.2022 / 25.10.2022

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Պայմանագրի կնքում	BSC												
2	Մեկնարկային հանդիպում ՀՀ ԿԳՄՍՆ ծրագրի թիմի հետ՝ առաջադրանքը վերանայելու, հիմնական գործողությունները հաստատելու համար	BSC												
3	Աշխատանքի մանրամասն պլանավորում	BSC												
4	Մարքեթինգային նյութերի պատրաստում և տեղեկատվության տարածում													
5	Մասնակիցների հավաքագրում	BSC												
6	Խմբերի կազմում	BSC												
7	Դասընթացների մոդուլների մշակում	BSC												
8	Փափուկ հմտությունների դասընթացների անցկացում	BSC												
9	Սոցիալական ձեռներեցության հմտությունների դասընթացների անցկացում	BSC												
10	Աջակցություն, խորհրդատվություն ծրագրի մասնակիցներին՝ սոցիալական ձեռներեցության կոնցեպտներ, գործողությունների պլաններ, գործարար ծրագրեր մշակելու հարցում՝ ըստ անհրաժեշտության	BSC												
11	Շարունակական խորհրդատվության տրամադրում	BSC												
12	Վերջնական հաշվետվության ներկայացում	BSC												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Երևանից և Տավուշի մարզից և հարակից տարածքներից 16-35 տարեկան մինչև 50 երիտասարդների, երիտասարդ կանանց համար: Մարզերի ընտրությունը պայմանավորված է դրանցում առկա Սոցիալական կարիքներից և դրանց՝ սահմանամերձ լինելուց: Ծրագրի իրականացման արդյունքում բացի ուղղակի շահառուներից, այն դրական ազդեցություն կունենա նաև համայնքի զարգացման վրա: Հիմնելով սոցիալական ձեռներեցություններ՝ երիտասարդները կնպաստեն իրենց մարզում, շրջանում, համայնքում աշխատատեղերի ավելացման, սոցիալական գործողությունների իրականացմանը: Բացի այդ նրանց սոցիալական ձեռներեցությամբ զբաղվելը օրինակ կհանդիսանա համայնքի մյուս ներկայացուցիչների համար:

Բացի այն, որ դասընթացների և խորհրդատվության անցկացման մեջ «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը կներդնի իր ողջ փորձն ու գիտելիքները, ընկերությունը կներգրավի նաև այլ շահագրգիռ կողմերի: Մասնավորապես նախատեսվում է դասընթացների և սեմինարների ժամանակ հրավիրել սոցիալակն ձեռներցության ոլորտի հմուտ մասնագետների, առաջնորդների, ձեռներեցների, օրինակ ներկայացուցչրների՝ «Առաջնորդության Դպրոց»-ից, Սոցիալական Ձեռներեցների (ՍՁ) դպրոցից, Էթիկայի դպրոցից, անհատ սոցիալական ձեռներեցների: Ընկերությունը ջանք չի խնայի մասնակիցներին գործարար միջավայրի նրբություններին ու դերակատարներին ծանոթացնելու գործում:

Ծրագրում մեծ կլինի նաև համայնքներիր, գյուղապետարանների, մարզպետարանների և ՀԿ-ների դերը: Ծրագրի մասին տեղեկատվության տարածումը իրականացվելու է ոչ միայն օնլայն հարթակների և BSC գործընկերների միջոցով, այլ նաև մարզպետարանների, համայնքապետարանների, տարբեր մարզերում գործող և երիտասարդների ու երիտասարդ կանանց հետ աշխատող ՀԿ-ների միջազգային կառույցների: Այսպիսով վերջիններս նույնպես իրենց ներդրումը կունենան համապատասխան մասնակիցներին գտնելու և ընտրության գործում:

Լրացուցիչ ֆոնդերի առկայության դեպքում BSC-ն ուրախ կլինի ծրագիրը պրոյեկտել և իրականացնել նաև այլ մարզերում:

Ռիսկերի գնահատում

Մասնակիցների հավաքագրման հետ կապված ռիսկեր: Կամայական ծրագրում կա ռիսկ, որ հնարավոր է համապատասխան մասնակիցների հավաքագրման դժվարություններ առաջանան: Ունենալով հարուստ փորձառություն, կապեր, 28 տարիների ընթացքում ձեռք բերված նեթվորք՝ BSC-ն կներդնի իր ողջ ջանքերը ծրագրի մասին տեղեկատվության տարածման մեջ: Մասնակիցների հավաքագրման գործընթացում կներգրավվեն նաև համայնքներ, մարզպետարաններ, երիտասարդների հետ աշխատող միջազգային կառույցներ, հասարակական կազմակերպություններ, գովազդներ կտեղադրվեն օնլայն հարթակներում: Տարիների ընթացքում BSC-ն երբևիցե չի ունեցել խնդիր մասնակիցների հավաքագրման գործում:

Ֆինանսական ռիսկեր: Ծրագրի առաջարկում ներկայացված բյուջեն ամբողջությամբ բավարար է Ծրագրի բարեհաջող իրականացման համար: BSC-ն կներդնի նաև իր կապերը մասնակիցների սոցիալական ձեռներեցությունների հիմնման համար ներդրումային գումարև հայթայթելու գործում: Այսպիսով այն լրացուցիչ խթան կարող է հանդիսաանալ մասնակիցների կողմից ձեռներեցությունների հիմնման համար:

Ֆորս մաժորային իրավիճակներ. Ծրագրի իրականացման ընթացքում BSC-ն ուշադրություն կդարձնի նաև հնարավոր ֆորս-մաժորային իրավիճակներին և կգործի ըստ իրավիճակի: Ռիսկերի չեզոքացման, ընդունման և հաղթահարման համար արագ արձագանքման մեխանիզմներ կմշակվեն, դրանք կքննարկվեն ԿԳՍՄՆ համապատասխան աշխատակազմի հետ:

Կամայական այլ ռիսկերի ի հայտ գալու պարագայում BSC-ն կիրականացնի նախապես մտածված պլանավորված գործողություններ դրանք ժամանակին կանգնացնելու և ծրագրի համար միայն դրական արդյունքով դուրս գալու համար:

<u>Ծրագրի աշխատակազմը</u>

«ԴՈՒ՝ Սոցիալական Ձեռներեց» ծրագրի իրականացման համար ներգրավված կլինեն հետևյալ մասնագետները՝ թիմի ղեկավարը, կոորդինատորը, դասընթացավարները և խորհրդատուները, հյուր խոսնակներ, ձեռներեցներ: «Բի Էս Սի»-ի մասնագետները կիրականացնեն խմբային քննարկումներ, կտրամադրեն խորհրդատվություն և աջակցություն ձեռներեցության կոնցեպտներ և բիզնես պլաններ մշակելու գործում: Արդյունքում՝ մասնակիցները հանդիպումների և քննարկումների ընթացքում կձևավորեն հիմնավոր պատկերացում սոցիալական ձեռներեցության ոլորտների և իրականացման վերաբերյալ: Մասնակիցները կունենան հստակ գիտելիքներ բիզնես պլանի բոլոր բաժինների վերաբերյալ: «Բի Էս Սի»-ն պատրաստ է իր փորձը ներդնել ծրագրում՝ խթանելու սոցիալական ձեռեներեցությունը, որտեղ մասնակիցների կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը կհետապնդի սոցիալական նպատակ և միտված կլինի սոցիալական փոփոխություններ իրականացնելուն՝ մի կողմից՝ հետևելով ավանդական ձեռնարկատիրության սկզբունքներին, և մյուս կողմից՝ իրագործելով թիրախային սոցիալական նպատակներին հասնելու և սոցիալական փոփոխությանը նպաստելու հնարավորությունները:

«Բի Էս Սի»-ն ներգրավում է բարձր որակավորում ունեցող փորձագետների և խորհրդատուների, որոնք ունեն երկար տարիների հարուստ փորձառություն նման աշխատանքների իրականացման ոլորտում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ծրագրի իրականացման նպատակով ներգրաված հիմնական անձնակազմը (ինքնակենսագրականները ներկայացված են կից):

Անուն Ազգանուն	Դերակատարում	Պարտականություններ
Սամվել Գևորգյան	Թիմի ղեկավար	Սամվել Գեւորգյանը կառավարման խորհրդատվության և ձեռներեցության որակավորված մասնագետ է՝ 28 տարվա փորձով: Նա «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի բիզնեսի խորհրդատվական և թրեյնինգային ընկերության տնօրենն է: Սամվել Գևորգյանը ձեռնամուխ է եղել մասնավոր հատվածի

		զարգացման տասնյակ ծրագրերի, որոնք ընդգրկում են ավելի քան 50 ոլորտներ Հայաստանում և արտերկրում: Սամվել Գևորգյանը ՎՀԵԲ-ի հավատարմագրված խորհրդատու /դասընթացավար է, ով իրավասու է իրականացնել կարողությունների զարգացման ծրագրեր կառավարման խորհրդատուների համար, որոնք գործում են Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդատվական ընկերություններում: Լինելով Հայաստանում կառավարման խորհրդատվական շուկայի զարգացման առանցքում՝ պարոն Գևորգյանը IMC Հայաստանի կառավարման խորհրդատվության ինստիտուտի հիմնադիր խորհրդի անդամ է: 2012 թ. մարտին Սամվել Գևորգյանը ստացավ իր լիիրավ անդամակցությունը Մեծ Բրիտանիայի Խորհրդատվության ինստիտուտին: Մասնագիտական գործունեության ընթացքում պրն. Գևորգյանը ներգրավված էր բազային հարցումների, հետազոտությունների, գնահատման, վերլուծությունների տարբեր ոլորտների հազարավոր նախագծերի և բիզնեսի համար Հայաստանում և արտերկրում: Թիմի ղեկավարը մեծ փորձ ունի ձեռնարկատիրության, սոցիալական ձեռնարկատիրության, նախաաքսելերացիոն-աքսելերացիոն ծրագրերի, ՓՄՁ սեկտորի զարգացման, կրթական ծրագրերի, տեղական տնտեսական զարգացման, գյուղական համայնքների զարգացման, համայնքների զարգացման և հարակից այլ ոլորտների նախագծերի, խորհրդատվական աջակցության և գնահատման հարցում, ունի ապացուցված բարձրորակ վերլուծական և փաստաթղթերի կազմման հմտություններ:
Նունե Վարոսյան	Խորհրդատու/ Դասընթացավար	Նունե Վարոսյանը կադրերի մասնագետ, վիճակագիր, սոցիալական հարցումների և բիզնեսի պլանավորման փորձագետ է, ոլորտում ունի մեծ գործնական փորձ: Նա ունի 12+ տարվա փորձ տվյալների հավաքագրման, վերլուծության ոլորտում՝ սոցիալական բարդ երեւույթներն ուսումնասիրելու համար: Նունեն մասնակցել է տարբեր դասընթացների և շարունակաբար կատարելագործել վերապատրաստման հմտությունները: Նա անցել է մանրակրկիտ վերապատրաստման ծրագիր Ճապոնիայի՝ ճապոնական փորձը «ՄՌ կառավարումը գործնականում» թեմայով և ստացել է գերազանցության սերտիֆիկատ Ճապոնիայի JICA- ի կողմից: Տիկին Վարոսյանը ավելի քան 15 տարի Հայաստանի ֆրանսիական համալսարանի (UFAR) վիճակագրության և ֆինանսական կառավարման դասախոս է: Իր կարիերայի ընթացքում տիկին Վարոսյանը խորհրդատվական և վերապատրաստման ծառայություններ է մատուցել մասնավոր հատվածի տարբեր ներկայացուցիչների: Ներգրավված լինելով տեղական և միջազգային ընկերությունների նախաձեռնած տարբեր ծրագրերի՝ նա նաև ձեռք է բերել հսկայական փորձ՝ որպես բիզնես խորհրդատու և վերլուծաբան: Նունեն մեծ փորձ ունի ձեռնարկատիրության, սոցիալական ձեռանարկատիրության, շրջակա միջավայրի, գենդերային և ռիսկերի վերլուծության և մեղմացման, կայուն կառավարման զարգացմանն առնչվող նախագծերում:

		Նրա փորձը ներառում է ներգրավվածություն բիզնես պլանի մշակմանը, ֆինանսական հաշվետվությունների մշակմանը, շուկայի ուսումնասիրությանը, վերլուծությանը, կայունության ծրագրի մշակման գործընթացներին՝ որպես թիմի ղեկավար, խորհրդատու, դասընթացավար, վերլուծաբան, սոցիալական հարցումների փորձագետ:
Աննա Գևորգյան	Խորհրդատու	Աննա Գևորգյանը հմուտ կառավարման խորհրդատու է և դասընթացավար: Ունի բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան և միջազգային կրթություն: Աննան ունի 7+ տարվա մասնագիտական փորձ և ներգրավված է եղել ավելի շատ նախագծերում՝ որպես ծրագրի ղեկավար, համակարգող, խորհրդատու, ֆոնդահայթայթման մասնագետ, վերլուծաբան, դասընթացավար, մարքեթինգի և սոցիալական հարցումների փորձագետ: Աննան ունի միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ աշխատանքի փորձը: Աննան առաջադրանքում կներգրավվի որպես խորհրդատու:
Լուսինե Մադաթյան	Խորհրդատու/ Դասընթացավար	Լուսինե Մադաթյանը փորձառու կառավարման խորհրդատու է, բիզնես վերլուծաբան, ունի ֆինանսների և կառավարման մագիստրոսի աստիճան: Լուսինեն ներգրավված է եղել ավելի քան 20 բիզնես նախագծերում՝ որպես կառավարման խորհրդատու, քոուչ, վերլուծաբան, գնահատող և ֆինանսների մասնագետ: Նա բացառիկ հմտություններ ունի բիզնեսի պլանավորման և զարգացման, ֆինանսական կառավարման, շուկայի հետազոտման, հարցումների և իրագործելիություն ուսումնասիրությունների իրականացման, ռազմավարական կառավարման և զարգացման, բիզնես ուսուցման և վերապարաստման, նախագծերի ոլորտում: Լուսինեն ներգրավված է եղել տեղական և միջազգային ընկերությունների կողմից նախաձեռնված տարբեր ծրագրերում և ունի համայնքային զարգացման ծրագրերի հսկայական փորձ: Լուսինեն առաջադրանքում կներգրավվի որպես դասընթացավար և խորհրդատու:
Մարիաննա Ավետիսյան	Խորհրդատու/ Դասընթացավար	Մարիաննա Ավետիսյանը ոլորտում բարձր որակավորում ստացած և փորձառու մասնագետ է, ով աշխատում է BSC Business Support Center-ում որպես բիզնեսի զարգացման ղեկավար: Իր տարիների աշխատանքային փորձը սոցիալական ձեռնարկատիրության, նախաաքսելերացիոն-աքսելերացիոն ծրագրերի, ՓՄՁ սեկտորի զարգացման, կրթական ծրագրերի, տեղական տնտեսական զարգացման, համայնքների զարգացման և հարակից այլ ոլորտներում օգտակար կլինի այս ծրագրի իրականացման համար: Մարիաննան ներգրավված է եղել մասնավոր բիզնեսի և համայնքի զարգացման մի շարք ծրագրերում: Աշխատելով տեղական և միջազգային ընկերությունների կողմից նախաձեռնված տարբեր նախագծերում՝ նա նաև հսկայական փորձ է ձեռք բերել որպես թրեյներ՝ իրականացնելով դասընթացներ գործողությունների և բիզնես պլանի մշակման, բիզնես առաջարկների պատրաստման, ֆինանսական հաշվետվությունների մշակման, կարիքների գնահատման, շուկայի հետազոտության, մարքեթինգի վերաբերյալ:

Նա ունի 6+ տարիների փորձ բիզնես խորհրդատվության և դասընթացների անցկացման գործում:

Ստորև կցված են աշխատակազմի ինքնակենսագրականները անգլերեն լեզվով, հայերեն տարբերակները կարող են տրամադրվել ըստ պահանջի:

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնն ուրախ կլինի ունենալ արդյունավետ համագործակցություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Գ. Սաֆարյան

Կ. Տ.

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ 0002, ք. Երևան, Եկմալյան 6,
«Բիզնես Պալե» կենտրոն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005343780100
ՀՎՀՀ 00930412
Հեռ.՝ 010 57 47 78
Կազմակերպության ղեկավար՝
bsc@bsc.am

---------- Ս. Գևորգյան

Կ. Տ.